

ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Հին ժամանակներում, երբ մարդիկ տեսնում էին կողք կողքի բուսած չարն ու բարին, փնտաւարն ու օգտաւարը, ցուրտն ու տաքը, ջուրն ու կրակը, լոյսն ու խաւարը և այլ այսպիսի միլիօնաւոր երեւոյթներ, երբ նրանց պատանեկական միտքը չէր կարող հասու լինել բնութեան գաղտնիքներին և որոշել այդ երեւոյթների պատճառն ու ներքին կապը, գալիս էին այն եզրակացութեան, որ տիեզերքի վարիչներն էլ երկու հոգի են՝ բարութեան և չարութեան աստուածներ, որոնք իրար դէմ կռիւ են մղում և աշխատում յաղթանակել։ Այդ պատճառով էր ահա ստեղծուել դուալիզմը, Որմզդի և Արհմնի պաշտամունքը, որ այնքան մեծ դեր խաղաց մեր պատմական անցեալում ևս։ Սակայն այդ պաշտամունքը հետեանք էր չը վերծանուած իրականութեան, չը լուծած երեւոյթների։ Մարդուս զարգացման զանազան շրջաններում, շնորհիւ նրա խուզարկու աչքի ու մտքի, ծնունդ էին առնում որոշ գաղափարներ, որոնք կամ լուծումն էին եղած իրական երեւոյթների, կամ արդիւնք հասարակական կեանքի ու կենցաղավարութեան։ Նստակեաց հողագործական կեանքի ընտելանալուց յետոյ՝ առաջին անգամ մարդկանց մէջ ծնաւ ընկերակցութեան և աշխատակցութեան գաղափարը, որով թէ իրենց ապրուստն էին ապահովում և թէ արտաքին թշնամիներից գազաններից ու կենդանիներից պաշտպանւում։ Այս գաղափարից օգտուեցին առաջին զօրաւոր և ծոյլ մարդիկ և առաջարկեցին մշտական պաշտպանութիւն կազմելու համար իրենց ոյժն ու ծառայութիւնը, որից՝ ծառայութիւնից՝ փոխուեցին հրամանատարութեան և շահագործեցին ընկերակցութեան և պաշտպանութեան գաղափարը։ Նրանք ժողովրդի գաւակներից իրենց ձեռքի տակ կազմած խմբերը ինչպէս կամեցան այնպէս գործադրեցին. իրենց

ձեռքն առին բերքի աւելորդը, ֆիզիքականի հետ միացրին նաև նիւթը և հիմք դրին տիրելու, իշխելու գաղափարին. պաշտպանութեան համար կազմակերպուած, պատիժ դարձան իւրայիններին և դրացիներին: Պատմութեան հնագոյն շրջաններից արդէն, որոշ երևոյթների առաջ իրեն թոյլ զգացող մարդկութիւնը աշխատել է այդ երևոյթները վերագրել գերբնական ոյժին և այդ ոյժը կոչել է աստուած, տէր, կառավարիչ տիեզերաց և այլն. մի խօսքով ստեղծել է աստուածութեան գաղափարը: Այդ գաղափարի շնորհիւ՝ որպէս եգիպտոսում ու Բաբելոնում, այնպէս էլ Յունաստանում ու Հնդկաստանում, առաջ եկան մարդիկ, որոնք սկսեցին շահագործել գերբնականի գաղափարը: Այն, շահագործելու նպատակաւ էին շինում խօսող սֆինքսները, երկնքից իջնող կրակները, զոհ ուտող կուռքերը և այլն, որոնց նկարագրով լի է ազգերի պատմութիւնը և Աստուածաշունչը: Այն, մարդիկ այդ հին դարերից արդէն սկսել էին շահագործել և գերբնականի գաղափարը: Երբ զանազան տեղերի ու կլիմաների տակ ապրողներն իրար հետ շփուեցին և հնարաւորութիւն գտան իրենց կարիքները լրացնել ունեցած աւելորդի փոխանակութեամբ, հարկ զգացուեց նրանց մերձեցման, հաղորդակցութեան և ստեղծուեց տուր և առի գաղափարը. սակայն շատ շուտ երևան եկան մարդիկ, որոնք օգտուեցին ճարպիկութեամբ և շահագործեցին տուր և առի գաղափարը, դարձնելով այն խաբէութեան և կեղեքելու ամբողջ մի սեստեմ: Բաւական է յիշել նախ փիւնիկեցիների վարմունքը իրենց ապակէ յուլունքներով և եւրոպացիների նոյնատեսակ վարմունքը Աֆրիկայի և Ամերիկայի բնիկներին կեղեքելիս:

Հռովմայեցւոց տիրապետութիւնը մի անվերջ շահագործութիւն էր ոյժի, իշխելու գաղափարի. նրանց միլիոնաւոր ստրուկները և ամբողջ աշխարհից կեղեքուած հարստութիւնը պերճախօս ապացոյց է ասածներիս: Այդ անարդարութեան, անհաւասարութեան, կեղծիքի և բռնութեան դէմ, որպէս ուժգին բողոք, յայտնուեց քրիս-

տոնէութեան քարոզը, որի նպատակն էր արդարութիւն և հաւասարութիւն, երկնքի արքայութիւն երկրիս վրայ, ուրացութիւն անձի և գոյքի և անսահման ներողամտութիւն և այդպէս էլ ապրեցին առաջին քրիստոնեայք, բայց հանդէս եկան ճարպիկ և ազահ ձեռնածուներ, որոնք զարհուրելի կերպով շահագործեցին այդ գեղեցիկ գաղափարները և մենք փոխանակ սիրոյ և հաւասարութեան, արդէն երկրորդ և երրորդ դարերից ականատես ենք փառասիրական կռուի և մրցման, որի դէմ հազիւ լսուած էին մի քանի ամենահամարձակ հայրերի դառնութեամբ լցուած ճառերը: Գալիս են միջին դարերը, տեղի է ունենում եւրոպական ցեղերի շարժումները, ուխտագնացութեամբ արեւելքի հետ մերձաւոր ծանօթութիւնը. բացւում է ախորժակ այդ երկիրների հաշուին հարստանալու և ահա սկսւում է քարոզ յանուն սուրբ տեղեաց պաշտպանութեան, կազմւում են բանակներ, շտապում արեւելք և այսպիսով սկսւում է շահագործուել բարեպաշտութեան գաղափարը և տեղի են ունենում խաչակրաց ամենախայտառակ արշաւանքները:

Երկար խաւարի ու կուրութեան մէջ մնալուց, երկար ժամանակ անկենդան և անհասկանալի արարողութիւններով կերակրուելուց, բայց այդպիսի չոր սնունդով չը բաւականանալուց յետոյ, արեւելքում և արեւմուտքում արաբական գիտութեան շնորհիւ երևան են գալիս մարդիկ, որոնք փորձում են խել լատին հոգեւորականների ձեռքից սուրբ գիրքը և անձամբ ծանօթանալ նրա ներքինի, նրա բովանդակութեան հետ: Շահագործողների խումբը սարսափահար դիմում է նոր միջոցի, հնարում է ինկվիզիցիա և սկսում շահագործել արդարութեան և արդարադատութեան գաղափարը: Գերմանախօս վաճառականներն իրենց թոյլ են զգում յայտնի շուկաներում. գերմանիա՛ կազմող մանրիկ պետութիւնները չեն կարողանում հարկաւոր չափով պաշտպանել գերմանացի վաճառականներին: Այստեղ սկսում է առանձին ոյժով առաջ գալ ազգայնութեան գաղափարը, որը գերմանացի երկրագործ և ար-

հետաւորի համար հաղիւ թէ առանձին նշանակութիւն ունենար՝ բացի քաղաքացիներից և տիրող դասակարգերից և ահա սկսում է շահագործուել ազգայնութեան գաղափարը յօգուտ գերմանական վաճառականների, որոնք, այդ պետութեան մանրիկ մասերի միացումից յետոյ՝ խորխտաբար երևում են համաշխարհային շուկաներում և իրենց հետ տանում Բիսմարկեան բռունցքը, որով սկսում են շահագործել ազգայնութեան գաղափարը:

Մարդկային ընկերակցութիւնը սկսուեց փոքրիկ շրջանից, մարդիկ ծնուելով ու մեծանալով որոշ վայրում, ընականաբար սկսում էին սիրել այդ վայրերը, որոնց հետ նախ կապուած էին իրենց մանկական կայտառ յիշողութիւններով ու խաղերով և ապա իրենց տնով ու աշխատանքով: Սակայն, ինչպէս վերը յիշեցինք, ոյժն իրեն ձեռքն առնող մասը, ուզենալով նախ անգործ չը մնալ և ապա հարստանալ աւելի մեծ շրջանների վաստակից ստացած տուրքով և աւելորդ պաշարով, սկսեց յարձակումները և յաղթելու դէպքում ընդարձակեց իւր իրաւասութեան սահմանը. ծննդավայր բառի հետ ստեղծուեց հայրենիք, հայրենիքի պաշտպանութեան գաղափարը, որը կարելի էր արդարացնել, երբ խօսքը միալեզու ժողովրդին էր վերաբերում: Բայց ագահութիւնը, որ չափ ու սահման չունէր, հարկադրեց նրանց առաւել ևս ընդարձակելու իրենց իրաւասութեան շրջանը, խլեցին ուրիշ ցեղերի և լեզուների երկիրներ և թէ և ոչ մի բարոյական իրաւական և ընական կապ չը կար նրանց և այդ երկիրների մէջ, այնուամենայնիւ երեկուայ նուաճած երկիրները հայրենիք կոչեցին և սկսան շահագործել հայրենիքի գաղափարը: Բայց այս բոլորը տեղի ունէր, երբ չկար ազատ խօսք, ազատ գիրք և մամուլ, չկար դպրոց և ճշմարիտ ուսուցիչ. չկար հեռախօս և հեռագիր, երբ կոպիտ ոյժը իւր ճանկերի մէջն էր առել այն բոլոր միջոցները, որոնց շնորհիւ կարող էր յայտնի դառնալ գաղափարի իսկական էութիւնը և նրա շահագործութիւնը, որոնք կարող էին բանալ այն մասսաների աչքերը, որոնց կեղեքում, շահա-

գործում էին բազմաթիւ գեղեցիկ գաղափարների անուան տակ:

Մենք չենք թուիլ, բոլոր գաղափարներն ու նրանց շահագործելու խայտառակ եղանակները. մենք մատնանիչ չենք լինիլ բոլոր շահագործողների խաւար՝ մարդասպան գործունէութեան վրայ: Թո՛ղ, ով աչք և միտք ունի, նայի և մտածի, և կը տեսնի, թէ ինչպէս են շահագործուել ու շահագործուում նրա ամենասրբազան գաղափարները. որպիսի այլանդակ գոյնով են ներկուել և այլանդակուել նրանք ու դրուել միամիտ ժողովրդի առաջ: Իսկ ճշմարտութիւն գտնողը չի կարող ծայրայեղ զգուանք ու ատելութիւն չը զգալ այդ դասակարգի մարդկանց դէմ և դուրս չընկնել՝ ամեն միջոց գործ դնելու, որ այդ շահագործող դասակարգից, այդ անօրինակ պատժից օր առաջ ազատուի: Գաղափարները ծնունդ են առնում երկու դէպքերում՝ կամ որպէս մարմնացում կեանքի մէջ յայտնուած և գործադրութեան դրուած սկզբունքի, որպէս բխրեղացում մարդկային հոգեկան և ֆիզիքական կեանքի ու կենցաղավարութեան և կամ որպէս միանգամայն հակադիր եղած երեւոյթների: Այսպէս սիրոյ գաղափարը կարող էր ծնուել կեանքի դրական երեւոյթից և ծայրահեղ ատելութիւնից, արդարութիւնը-մեղաւորութիւնից, միաբանութեան գաղափարը-անմիաբանութիւնից, արդարադատութեան գաղափարը—անարդարութիւնից, հաւասարութեան գաղափարն—անհաւասարութիւնից, անհնազանդութեան գաղափարը—ծայրահեղ կոյր հնազանդութիւն պահանջելուց, անհաւատութիւնը կոյր հաւատի պահանջից և այլն: Բայց հին ժամանակներում, երբ ծնունդ էին առնում որոշ գաղափարները, հնար չը կար արագութեամբ կեանքի մէջ անցկացնելու, մարդկանց մէջ տարածելու և օրքան կարելի է շատ մարդկանց գիտակցաբար կապելու նրանց հետ: Այդ է գլխաւոր պատճառը, որ շատ և շատ գեղեցիկ գաղափարներ հոգ չէին դնում ամեն տեղ միատեսակ պատուաւորութիւն և անձնուէր քարոզիչների ու նրանց համար անձնադիր մարտնչողների կողքին

յայտնուում էին ամենաճարպիկ շահագործողներ, խաբե-
բայ ձեռնածուներ, որոնք շահագործում էին այդ կեանքի
աղբիւրները, միլիոնաւոր մարդկանց սպանելու, բարոյա-
պէս այլանդակելու զէնք դարձնելով։ Պէտք է որ քոան-
երրորդ դարում, երբ մեր տրամադրութեան ներքոյ են
ազատ խօսքն ու գրիչը, հեռախօսն ու հեռագիրը, երկա-
թուղին ու տպագրական մամուլը՝ մեր ժամանակ, երբ
գաղափարի համար մարտնչողների թիւը հասնում է մի-
լիոնների, շահագործող ձեռնածուները դադարէին գա-
ղափարներն աշխարհ շահագործելուց, բայց ցաւօք սրտի
այդ շենք տեսնում և կրկին յուսահատական փորձեր են
լինում օգտուիլ ժողովրդի տգիտութիւնից և շահագործել
հալրենասիրութիւն, կարգապահութիւն, աստուածասիրու-
թիւն, ուղղափառութիւն գաղափարները։

Նայեցէք հրապարակի վերայ և տեսէք, թէ ինչպէս է
շահագործուում հայրենասիրութիւն գաղափարը։ Մարդ-
կանց, որոնք սիրում են հայրենիքի բոլոր տանջուած, աշ-
խատաւոր, իրաւազուրկ, կեղեքուած և խաւարի ու մտրակի
տակ մահուան դուռն հասցրած միլիոնաւոր զաւակներին,
որոնք կուում են այդ թշուառութեանց նախապատճառ և
իրենց իրական շահերի համար այդ դրութիւնը անվերջ
պահպանել ցանկացողների դէմ, անուանում են դաւաճան,
խօկ նրանց, որոնք օղու և յիսուն կոպէկ վարձատրութեան
համար՝ որոշ երգերով և աղմուկով աշխատում են պաշտ-
պանել հայրենիք կեղեքողների դիրքը, իրաւասութիւնն ու
պաշտօնը ի մնաս 130 միլիոն ժողովրդի, անուանում են հայ-
րենասէր, (պատրիօտ)։ Նրանց, որոնք բողոքում են մտրակի,
ծեծի, բռնութեան և մարդկանց անասնական կացութեան
մէջ պահելու դէմ, կոչում են անկարգ, իսկ կենդանի
մարդկանց խարոյկներ սարքողներին, մանկանց և կիներին
կոտորողներին, հրձիգներին և կողոպտողներին՝ — կարգա-
պահ։ Բայց առաւել ցաւալին այն է, որ հանդէս են
եկած նաև եկեղեցու հայրեր, աւետարանի աշակերտներ,
ահագին թեմերի կառավարիչներ, որոնք լուռ էին կամ
անմիջական մասնակից, երբ մեր հսկայական հայրենիքում

կատարւում էր աներես վակիսանալիան, երբ դժոխային հալածանք էր յարուցւում փոքրիկ աղգերի դէմ, երբ բռնաբարւում էր աստուածատուր լեզուն, երբ անխտիր հալածւում էին ճշմարիտ խօսքն ու գործը և գործունեայ անձինք: Երբ ցանկութիւն էր յղացւում աղօթից տուն շինելու, որ դոնէ այնտեղ մարդիկ անձայն՝ Աստուծուն յայտնէին իրենց դառնութիւնն ու տանջանքը, որովհետև հրապարակաւ այդ արգելուած էր, և այդ գործին արգելք էին հանդիսանում, այժմ հրապարակ են դուրս եկել Սարատով, Մոսկվա և այլ տեղեր, որոնք կոչեր են ցրւում, քարոզներ են խօսուում, որ տրտունջը, պահանջը, գանգատն ու բողոքը, թշուառութեան նկարագիրն ու դարման խնդրելը դէմ են ուղղափառութեան, դէմ են հաւատոյ և հրաւիրում են յանուն հաւատոյ զինուել այդ նորելուկ տարրի դէմ:

Սոսկալի ծաղր հաւատոյ, քրիստոնէական հաւասարութեան և եղբայրութեան դէմ:

Հայրեր ո՛ւր էիք, երբ մի որոշ դասակարգ ծծում էր աշխատաւոր թշուառ գիւղացու արիւնը, գողանում պատիւը, յափշտակում նրա կմախք դարձած կնոջ ցամաքած կաթը՝ զրկելով նրա զաւակին թշուառ ապրելու հնարաւորութիւնիցն անգամ: Ո՛ւր էիք, երբ աշխատաւոր մեղուները սոված էին մնում, իսկ նրանց վաստակը վատնւում էր անառակ և ցոփ կեանքի վրայ անգործ կրէտների կողմից:

Ո՛ւր, ո՛ւր էիք, երբ դարեր շարունակ կատարւում էր գաղափարի շահագործութիւնը: Զուր էք ձեր մութ ցանկութիւնները խաչի և հաւատոյ հետ կապում, զուր էք աշխատում կռուել միջնադարեան ժանգոտած զէնքերով: Այն ոգին, որ դուք հաղարաւոր ածականներով էք մկրտում, Աստուծոյ հոգին է, մարդկանց սրտերը զտող և բիւրեղացնող ոգի, որոնց զտուելուց յետոյ՝ առաջները ոչ մի արգելք չի կարող կանգնել: Համոզուեցէք այս բանում, համոզուեցէք, որ գաղափարների շահագործութեան դարն անցաւ անդառնալի և XX դարը կը կոչուի գաղա-

փարնեի մարմնացման մեծ դար. մարմնացման՝ աշխատաւոր ձեռքերի և ճակատների շնորհիւ և դորա արշալոյսն է, որ սկսում է բացուել տանջուած Ռուսաստանից մարդկութեան տանջուած բոլոր զաւակների վրայ, իսկ ձեր թագաւորութիւնն անդառնալի, աւանդ, անդառնալի անցաւ:

Ե. Տ. Վ. Մ.

ՎՐԱՑԵՐ ԷՆԻՑ

Օ՛, սիրելիս, սև խաւարը
Երբ պատում է սար ու ձորեր,
Երբ տնջում են երկինք, երկիր,
Աչքից թափում դառն արցունքներ,

Երբ սպառում է կենդանի շունչ,
Կեանքը ծածկում սգոյ քողով.
Սղմում, ճանկում կլանելու,
Նայում կրակով լի աչքերով.

Մի վախենար, այդ բոլորը
Արդասիք է ժամանակի.

Կանցնի, ինչպէս շատ տեղերում,
Բաւ է, նա էլ կը բարակի.

Նեղութիւնը մեղ չի յաղթիլ.

Միշտ արթնացնում է տանջանքը.

Որչափ ուժգին խփես կայծքարին,

Այնչափ ուժեղ կը տայ կրակը.

Ահեղ քամուց ծովն ուռչում է,

Ալեկոծւում, սփին զարկում.